

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՅԱՌՆՈՒՄԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՒԱՏԸ

Ժէ դարի հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական շրջաններից մէկն էր, որն սկսուեց Արարատեան աշխարհն ամա-
յացնող բռնազաղթով եւ յաջորդող տասնամեակներին շարունա-
կուեց Հայաստանի տարածքում ընթացող թուրք-պարսկական
պատերազմներով եւ նրանցով պայմանաւորուած տարածաշրջանի
ընդհանուր անկայունութեամբ եւ խռովութիւններով:

Թւում էր, թէ միեւնոյն հունով կ'ընթանայ նաեւ ԺԸ դա-
րը, սակայն ժողովրդի կենսական բոլոր ոյժերի լարման շնորհիւ
այն այլ ընթացք ունեցաւ: 1699 թ. Միւնեաց աշխարհում Իսրա-
էլ Օրիի մասնակցութեամբ գումարուեց Անգեղակոթի ժողովը՝
հիմք դնելով սկսուելիք ազգային-ազատագրական պայքարին, իսկ
հեռաւոր Սեբաստիայից Կ. Պոլիս հասած Մխիթարը, որը յետոյ
պիտի կրէր Սեբաստացի անունը, 1700 թ. հիմնադրեց իր հռչա-
կաւոր միաբանութիւնը: Խորհրդանշական է, որ իրար յաջորդող
երկու տարիներում դրուեցին զինական եւ մշակութային պայքա-
րի հիմքերը, որոնք ժամանակի հոլովոյթի մէջ զարգացան միա-
ձուլուած: Մխիթարեան հայրերից Սամուէլ Արամեանի պատկե-
րաւոր բնորոշմամբ. «Հայաստանի լեռներէն կը ժայթքէին զոյգ
հրաբուխներ, որոնց ջերմութիւնը պիտի հրավառէր հայ միտքն
ու սիրտը, եւ ոյժ պիտի տար հայ բազուկին՝ ցնցելու բռնակա-
լութեան ու ստրկութեան լուծը...»

Մխիթար Աբբահայր եւ Ս. Ղազարու բուռ մը վանականնե-
րը՝ հեռաւոր իրենց պանդխտավայրէն խանդավառօրէն կը հետե-
ւէին հայրենիքի իրադարձութիւններուն՝ վերածնունդի մեծ երա-
զով»:

Վերածնութեան այս հաւատն ու յոյսն էր ընկած Մխիթա-
րեան նուիրումի հիմքում: Թերեւս ոչ ոք անցեալն այնքան չի

կարեւորել ու իմաստաւորել հէնց ներկայի ու ապագայի համար, որքան Մխիթարեանները եւ ԺԸ դարում նրանք դարձան անցեալը ապագային կապող օղակը:

Անցումային շրջանները բոլոր բնագաւառներում սովորաբար համարուում են ծանր ու յեղաքեկիչ: Շնորհիւ Մխիթարեանների հայկական ուշ միջնադարից դէպ ընդհանուր համաւերոպական նոր շրջանը անցումը կատարուեց սահուն կերպով հայկական աւանդների ու եւրոպական մեթոդաբանութեան եւ ըմբռնումների մի զարմանալի միահիւսմամբ:

Պատմութեան բնագաւառում այն արտայայտուեց Միքայէլ Չամչեանով, նրանով կատարուեց անցումը միջնադարեան պատմագրութիւնից դէպ նոր շրջանի պատմագիտութիւնը:

Միջնադարեան աշխարհացոյցերից նոր շրջանի աշխարհագրական գործերը եւ քարտէզագրութիւնը անցումը կատարուեց Ստեփանոս Քիւլլեր Ագոնցի եւ Ղուկաս Ինճիճեանի հատորներով, իսկ Մխիթար Սեբաստացու եւ Միքայէլ Չամչեանի գործերով միջնադարեան քերականագիտութիւնից եւ քերականական մեկնութիւններից դէպ նոր շրջանի լեզուաբանութիւնը:

Միջնադարեան արտաքին անուանուած գիտութիւններից եւ նրանց լուծմունքներից յետոյ բնական գիտութիւնների տարբեր ընդհանուր գիտակարգերին՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրութիւն, աստղագիտութիւն եւ այլն նուիրուած Մխիթարեան դասագրքերով վերստին հայկական կեանքում հայոց լեզուով ներկայացուեցին աշխարհի ժամանակի գիտական ըմբռնումները, գիտութեան բնագաւառում եւս ապահովելով համաքայլութիւնը աշխարհի միւս ժողովուրդներին:

Նոյնը վերաբերուում է նաեւ հայկական տպագրութեանը: Յակոբ Մեղապարտից եւ Աբգար դպիր Թոխատեցուց յետոյ Մխիթարեաններին էր վիճակուած աւարտելու ձեռագիր մատեաններից դէպ տպագիր գիրքը կատարուող անցումը, որը նշանաւորուեց հայ գրքարուեստում չգերազանցուած Մխիթարեան հրատարակութիւններով, ձեռագիր մատեաններից դէպ տպագիր գիրքը անցումը խորհրդանշելով փորագրանկարներով եւ փորագրատիպ լուսանցազարդերով, կիսախորաններով ու զարդադրերով:

Միաժամանակ անհրաժեշտ է եղել, որ այս հրատարակութիւնները ժԸ եւ ժԹ դարերում պահելով իրենց տպագրական բացառիկ որակը, երբեք չվերածուեցին չբեղ անախրոնիզմների, այլ միշտ համաքայլ ընթացան եւրոպական հրատարակութիւններին, գրքարուեստի շրջանակում իսկ ներկայացնելով նախ դասականութեան, ապա եւ ռոմանտիզմի, իսկ ժԹ դարավերջից արդէն անցեալ դարի գիտական մտածողութիւնը, որի կոթողային մարմնաւորումը դարձան Մանուէլ Քաջունու «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» բառգիրք հանրագիտարանի երկու մեծագիր հատորները:

Նոյնը վերաբերում է նաեւ բանաստեղծութեանը: Շնորհիւ Մխիթարեանների հայ բանաստեղծութիւնը եւս նոր շրջանում զարգացաւ ընդհանուր գրական ընթացքի շրջանակում, ազգային դրոշմ հաղորդելով եւրոպական գրականութեան թեմաներին եւ գեղագիտական ըմբռնումներին: Այսպէս Արսէն Բազրատունու Հայկ Դիւցազնով հայկական դասականութիւնը եւրոպական դասականութեան հին թեմաները փոխարինեց հայկական հերոսական անցեալով, իսկ Ալիշանի ստեղծագործական քուրայում Հիւսիսային Շոտլանդիայի ծեր բարդը դարձաւ Հայոց Նահապետ՝ համապատասխան ազգային դրոշմ հաղորդելով նաեւ ողջ եւրոպայով գրական ալիքի նման անցած Օսմանական շարժմանը:

Ջարմանալի եւ ուսանելի էր անգամ 1773 թ. Մխիթարեան միաբանութեան տեղի ունեցած բաժանումը, որն յաջորդող տասնամեակներին ուղեկցուեց ոչ թէ շեշտուած հակասութիւններով ու տեւական փոխադարձ մեղադրանքներով, այլ հայ ժողովրդի վերածնութեան միեւնոյն նպատակին լծուած ծառայութեան շրջագծում փոխադարձաբար միմեանց լրացնելով:

Այս բաժանումից յետոյ մի կողմից Սուրբ Ղազարն էր Հիւսիսային Տենի գեղագիտութեան ու եւրոպական ռոմանտիզմի վրայ խարսխուած գեղարուեստական ջերմ շնչով, որն իր աւարտուն տեսքն էր ստանալու Ալիշանի տեղագրական հատորներում, որոնցում Աւետիք Իսահակեանի ընորոշմամբ, «իր հատորների եւ մեր հոգիների մէջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը եւ պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց եւ իրական», իսկ միւս կողմում Վիեննական հայագիտութիւնն էր ժամանակի գերմանական

քննական մեթոդների եւ պատմա-համեմատական դպրոցի սկզբունքների կիրառմամբ:

Թերթելով «Բազմավէպ»ի էջերը մեր աչքերի առջեւ յառնում է ժամանակակիցների բնորոշմամբ «գեղեցիկն իտալիան» եւ նրա ամերին Վենետիկի Մխիթարեանների գրչով վերակերտուած Հայոց աշխարհիկը, իսկ «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում քննուած են թէ որքանով են վաւերական եւ կամ երբ են գրուել նոյն մեր երկրին նուիրուած հայ մատենագրութեան այս երկերը:

Վենետիկը հիացումով եւ սքանչացումով ներկայացնում է մեր անցեալի աւանդական արժէքները Վարուժանի բնորոշմամբ «սուրբի մը հաւատքով», իսկ Վիեննան քննական մօտեցմամբ պատմա-քանասիրական մանրակրկիտ վերլուծութեան է ենթարկում այս յուշարձանները:

Մխիթարեաններն իրենց այս գործունէութեամբ, գիտութեան միջոցով աշխարհին ներկայացրեցին Ասիայում եւրոպական քաղաքակրթութեան ջահակիրը եղող հայ ժողովրդին: Այս առումով բնորոշ է յատկապէս 1881 թուականի Վենետիկի աշխարհագրական երրորդ միջազգային համաժողովը, որի ցուցահանդէսի հայկական տաղաւարը ժամանակակիցների վկայութեամբ ոչնչով չի գիջել եւրոպական պետութիւնների ցուցադրութիւններին եւ ինչպէս «Բազմավէպ»ի յօդուածագիրն է գրում, միւս երկրների հետ համեմատած հայկական տաղաւարում պակասում էր միայն դրօշը եւ այս դրօշն ունենալու սպասումով եւ հաւատով է միայն ստուգաբանում Մխիթարեան նուիրումը, առանց որի այս նուիրումը զարմանալի, անընկալելի եւ անգամ անհեթեթ էր թւում, թէ յանուն ինչի Ադրիականի գեղածիծաղ ամերին եւ աւստրիական չքեղ պալատների հարեւանութեամբ արեւելքից եկած մի խումբ կրօնաւորներ այսպէս անիմաստ մաշում են իրենց կեանքը:

Այս զարմանքը լաւագոյնս արտայայտուել է Ռուսական պետութեան ԺԹ դարի վերջի նշանաւոր գործիչներից Սինոդի աւագ դատաւոր եւ Սենատի անգամ իշխան Պրեզնոսսեւի 1898 թ. Ս. Ղազար այցելութիւնում, որի ժամանակ տեսնելով Մխիթարեանների գործունէութիւնը, անցեալի արժէքների խնամքով պահպանումը եւ հրատարակուող կոթողային հատորներն նա աւսում է. «Ես հիացած եմ ձեր աշխատանքի համբերութեան եւ

սիրոյ նկատմամբ՝ հանդէպ ձեր ազգի, բայց ցաւում եմ, որ դրանք ի գուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ։ Որի համար են այդ անձնագորհումները։ մի փոքր ժողովրդի համար՝ ցրուած երկրի երեսին եւ մատնուած կորուստի»։ Ի պատասխան այս խօսքերի արքահայր իգնատիոս Կիւրեղեանն ասում է. «Հայ ժողովուրդը շատ աւելի ահեղ ժամանակներ ու բռնութիւններ է տեսել, նուազել է թուով, բայց մնացել է ոգով կայուն ու անվթար։ Մեր յոյսը Աստծու վրայ է, մեր ժողովրդի տոկունութեան եւ պատմութեան անիմանալի ընթացքի վրայ»։

Պատմութեան անիմանալի այս ընթացքի հանդէպ ունեցած հաւատով գործեցին Մխիթարեան հայրերը, որոնց մարմիններն ամփոփող գերեզմանատան պատին նոյն այդ մեծ հաւատաւորներից Ղեւոնդ Ալիշանը գրել է.

Վաստակեցան եւ աստ հանգչին

Անդ հանգչում են Մխիթարի տեսիլը իրականացնողները եւ անդ այսօր գործում են այդ տեսիլի իրականացումը շարունակողները եւ Մխիթարեան զոյգ միաբանութիւններում ամբարուած անցեալի մեր գանձերը խնամքով պահպանողները։ Վիեննայի Մխիթարեանների ձեռագրերն իրենում կրող փայտեայ պահարանը վերեւում խաչով պսակուող կաթողիկէ եկեղեցու մի գեղեցիկ մանրակերտ է, որի ընդհանուր յօրինուածքի վիմապատերը կազմւում են այնտեղ դրուած մեր ձեռագրերով։

Ձեռագրերի նման պահարանն իսկ խօսուն արտայայտութիւնն է հայ մշակոյթի հանդէպ Մխիթարեանների պաշտամունքի հասնող վերաբերմունքի եւ մենք մեր կողմից խոնարհաբար կը մաղթէինք որ սկսուող նոր հարիւրամեակում եւս Մխիթարեանների գործունէութեան հիմքում ընկած լինի նոյն այս պաշտամունքը, որը գլխաւոր գրաւականն է Մխիթարի տեսիլի անմար ճառագման եւ վերստին մէկ միաբանութիւն կազմած այս հաստատութեան կենսունակութեան ու յարատեւումի, որպէս Մխիթարեան վաստակաւորների։

ՎԱՐԴԱՆ ՊԵՏԻԿԵԱՆ